



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն**

« 07 » « հունիսի » 2024 թ. № 202-Լ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Փարիզյան համաձայնագրի 9-րդ հոդվածի 7-րդ մասով, 13-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ մասերով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման հավելված N 1-ի «Շրջակա միջավայրի նախարարություն» բաժնի 6-րդ կետի 4-րդ միջոցառման.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Հաստատել՝**

- 1) Միավորված ազգերի կազմակերպության՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության ստացած կլիմայական ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի,
- 2) Միավորված ազգերի կազմակերպության՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի իրականացման համար

Հայաստանի Հանրապետության ստացած կլիմայական ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և հաշվետվողականության մեթոդաբանությունը՝ համաձայն հավելված N 2-ի,


3) կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների՝ ըստ ոլորտների դասակարգման ուղեցույցը՝ համաձայն հավելված N 3-ի:

2. Կլիմայական քաղաքականության վարչության պետին՝ մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը ապահովել պետական կառավարման համակարգի մարմիններից, Կենտրոնական բանկից, Երևանի քաղաքապետարանից և համայնքներից հավելված N 1-ով սահմանված տեղեկատվության հավաքագրումը նախորդ բյուջետային տարվա համար:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

6/7/2024

X



ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«*Ք. հունվար*» 2024թ.  
ք. Երևան

## ԿԱՐԳ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

Աղյուսակ 1. Փարիզյան համաձայնագրի 9-րդ հոդվածի համաձայն ստացած կլիմայական  
ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձև

1	Ծրագրի, գործողության կամ միջոցառման անվանումը	
2	Ծրագրի, գործողության կամ միջոցառման նկարագիրը	
3	Իրականացնող մարմինը/կազմակերպությունը	
4	Աջակցության աղբյուրները	
5	Ստացող մարմինը/կազմակերպությունը	
6	Արդյոք գործողությունը, ծրագիրը կամ միջոցառումը ներառված է պետական կամ համայնքային բյուջեում	
7	Գումարի չափը, ՀՀ դրամով	
8	Գումարի չափը, ԱՄՆ դոլարով (հնարավորության դեպքում)	
9	Ժամանակահատվածը	
10	Ֆինանսական գործիքը	
11	Ֆինանսավորման կարգավիճակը	
12	Ուղղվածությունը	
13	Ոլորտը	
14	Ենթաօլորտը	
15	Ներդրումը տեխնոլոգիայի զարգացման և փոխանցման նպատակների իրականացման գործում	
16	Նպաստումը կարողությունների զարգացման նպատակին	
17	Ծրագրի կարգավիճակը	
18	Օգտագործումը, ազդեցությունը և արդյունքները	
19	Հղում և հավելյալ տեղեկատվություն	

Ներկայացնող՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_թ.

1. Աղյուսակում 1-ում տեղեկատվությունը պետք է ներկայացվի հնարավորինս համապարփակ, ամբողջական, ըստ առկայության և վերաբերելիության՝ հետևելով սույն հրամանի հավելված N 2-ի 2-րդ գլխում սահմանված չափանիշներին:
2. 1-ին տողում լրացվում է համապատասխան ծրագրի, գործողության, միջոցառման անվանումը:
3. 2-րդ տողում լրացվում է համապատասխան ծրագրի, գործողության, միջոցառման համառոտ նկարագիրը: Նկարագիրը պետք է ներառի նպատակը, առաջնային և երկրորդային ազդեցությունների նկարագիրը և նպատակին հասնելու համար նախատեսված հիմնական գործողությունները:
4. 3-րդ տողում լրացվում է ստացված աջակցության աղբյուրը՝ համաձայն սույն հրամանի հավելված N 2-ի 3-րդ գլխի՝ նշելով աջակցություն տրամադրող կառույցի անվանումը:
5. 4-րդ տողում լրացվում է այն մարմնի կամ իրավաբանական անձի անվանումը, որը ստացել է կամ ստանում է ֆինանսական աջակցությունը:
6. 5-րդ տողում լրացվում է այն մարմնի կամ իրավաբանական անձի անվանումը, որն իրականացրել է կամ իրականացնում է 4-րդ տողում նշված ֆինանսական աջակցությամբ ծրագիրը:
7. 6-րդ տողում նշվում է, թե արդյոք տվյալ գործողությունը, ծրագիրը կամ միջոցառումը ներառված է պետական կամ համայնքային բյուջեում և եթե այո, ապա նշվում է համապատասխան բյուջետային ծրագիրը, դրա դասիչը:
8. 7-րդ տողում լրացվում է ստացված ֆինանսական աջակցության չափը Հայաստանի Հանրապետության դրամով (արտարժույթի փոխարկման համար հիմք է ընդունվում ֆինանսական աջակցության ստացման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքը, իսկ ապագա հոսքերի համար կիրառելի է նախորդող բյուջետային տարվա դեկտեմբերի 31-ի փոխարժեքը:)

9. 8-րդ տողում լրացվում է ստացված ֆինանսական աջակցության չափը ԱՄՆ դոլարով (հնարավորության դեպքում), ինչպես նաև հատկացված գումարի չափը, եթե այն տարբերվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ստացված գումարից:
10. 9-րդ տողում լրացվում է ֆինանսական աջակցության ստացման ժամանակահատվածը՝ ներառելով փաստացի և կանխատեսվող հոսքերը:
11. 10-րդ տողում լրացվում է ֆինանսական աջակցության տրամադրման ֆինանսական գործիքի տեսակը՝ համաձայն սույն հրամանի հավելված N 2-ի 4-րդ գլխի:
12. 11-րդ տողում լրացվում է ֆինանսական աջակցության տրամադրման կարգավիճակը՝ համաձայն սույն հրամանի հավելված N 2-ի 5-րդ գլխի 8-րդ կետով սահմանված դասակարգման:
13. 12-րդ տողում լրացվում է ֆինանսական աջակցության տրամադրման նպատակային ուղղվածությունը՝ համաձայն սույն հրամանի հավելված N 2-ի 6-րդ գլխի:
14. 13-րդ և 14-րդ տողերում լրացվում են ֆինանսական աջակցության տրամադրման ոլորտը (օրինակ՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում, էներգետիկա, ջրային ռեսուրսներ, թափոնների կառավարում, շինարարություն, հանրային կառավարում, կրթություն, զբոսաշրջություն, առողջապահություն) և ենթաօլորտը (օրինակ՝ անասնաբուծություն, ոռոգում, կոյուղի, վերականգնվող էներգիայի արտադրություն, քաղաքացիական շինարարություն, էլեկտրաէներգիայի բաշխում, ածխածնի կլանում և այլն)՝ համաձայն սույն հրամանի հավելված N 3-ի՝ աղյուսակ 2-ի (Կլիմայական ազդեցություն ունեցող գործողությունների դասակարգիչ և օրինակներ)՝ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների՝ ըստ ոլորտների դասակարգման ուղեցույցի:

15. 15-րդ տողում լրացվում է «Այո» կամ «Ոչ»՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք տրամադրված ֆինանսավորումն ապահովում է ներդրում տեխնոլոգիայի զարգացման և փոխանցման նպատակների իրականացման գործում: Սույն հրամանի իմաստով տեխնոլոգիաների փոխանցումը ներառում է սարքավորումների և դրանց օգտագործման համար անհրաժեշտ փորձի գործնական գիտելիքների և կարողությունների ներհոսքերը: Այս տեսակի աջակցության արդյունքում ստեղծվում է կամ վերանորոգվում է կամ վերազինվում է ֆիզիկական ենթակառուցվածք:
16. 16-րդ տողում լրացվում է «Այո» կամ «Ոչ»՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք տրամադրված ֆինանսավորումը նպաստում է կարողությունների զարգացմանը: Կարողությունների զարգացումը կլիմայական փոփոխությունների հետևանքներին արագ արձագանքելուն, հարմարվելուն և/կամ դրանց մեղմմանն ուղղված գործողություններ ձեռնարկելուն միտված հմտությունների, կարողությունների, գործընթացների և ռեսուրսների զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված գործընթաց է:
17. 17-րդ տողում լրացվում է ծրագրի կարգավիճակը՝ համաձայն սույն հրամանի հավելված N 2-ի 5-րդ գլխի 9-րդ կետի:
18. 18-րդ տողում լրացվում է տեղեկատվություն տրամադրված ֆինանսական աջակցության օգտագործման ուղղությունների, ազդեցության և արդյունքների վերաբերյալ, ըստ հնարավորության՝ օգտագործելով նաև քանակային ոչ ֆինանսական ցուցանիշներ, ինչպես նաև տեղեկատվություն չօգտագործված և հետ վերադարձված գումարի չափի և պատճառների վերաբերյալ:
19. 19-րդ տողում լրացվում է ծրագրի կամ միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող ինտերնետային էջի հղումն ու վերաբերելի ցանկացած հավելյալ տեղեկատվություն:

Հավելված N 2

շրջակա միջավայրի նախարարի  
2024 թվականի հունիսի «07»-ի N 202 - Լ հրամանի

### ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՅԱԾ  
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ կանոնակարգվում է կլիմայական ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման գործընթացը: Սույն մեթոդաբանությունը ներառում է կլիմայական ֆինանսավորման հիմնական հասկացությունները, չափանիշները և նշիչները, աղբյուրները, տրամադրման գործիքները, իրականացման կարգավիճակը և նպատակային ուղղվածությունը:

#### 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն մեթոդաբանության իմաստով՝ ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
  - 1) **կլիմայական ֆինանսավորում**՝ տեղական, ազգային կամ միջազգային ֆինանսավորումն է, որը ստացվում է օրենսդրությամբ չարգելված տարաբնույթ՝ հանրային, մասնավոր, այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներից և նպատակ ունի աջակցել կլիմայական փոփոխությունների հետևանքների մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված գործողություններին,

- 2) **կլիմայի փոփոխության հետ կապված ծախսեր՝** ծրագրերում և միջոցառումներում ներդրված ֆինանսական միջոցներ, որտեղ կլիմայի փոփոխության հետ կապված գործողությունները կարող են բյուջետավորված լինել որպես բացառապես կամ մասնակիորեն կլիմայի փոփոխության հետ կապված ծախս,
- 3) **հաշվետու հաստատություն՝** կլիմայի ֆինանսավորման նպատակով աջակցություն ստացած և հաշվետու ժամանակաշրջանում ստացող պետական կառավարման համակարգ կամ տեղական ինքնակառավարման մարմին,
- 4) **ծրագիր՝** պաշտոնապես առանձնացված միջոցառումների կամ գործողությունների համակցություն, առանձնացված բյուջեով՝ միտված դրանում ամրագրված նպատակների՝ սահմանված ժամկետներում իրագործմանը (ներառյալ՝ արդյունքների գնահատման չափորոշիչները), որոնք ներառում են կլիմայի փոփոխության մեղմման և/կամ հարմարվողականության բաղադրիչներ,
- 5) **կլիմայի փոփոխության մեղմում՝** միջոցառումների տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների ամբողջություն՝ ուղղված ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը և ջերմոցային գազեր կլանող կարողությունների ստեղծմանը,
- 6) **կլիմայի փոփոխության հարմարվողականություն՝** շրջակա միջավայրի և դրա բաղադրիչների՝ կլիմայի փաստացի և կանխատեսվող փոփոխությանը հարմարվելու կարողություն՝ վնասները նվազեցնելու, բացասական հետևանքները մեղմելու և հնարավորություններից օգտվելու համար:

### 3. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՇԻՉՆԵՐԸ

3. Ֆինանսավորման հաշվետվողականության նպատակը՝ կլիմայի փոփոխության ընթացիկ և ակնկալվող ազդեցություններին առնչվող ծրագրերի ֆինանսավորման մշտադիտարկումն է:



4. Ծրագիրը կամ միջոցառումը դասակարգելու համար անհրաժեշտ է, որ կլիմայի փոփոխության հետ կապված ֆինանսավորումը, ներդրված միջոցները միաժամանակ բավարարեն ստորև թվարկված բոլոր պայմաններին.
- 1) ընդգրկեն կլիմայի փոփոխության մեղմման կամ հարմարվողականության նպատակները կամ երկուսը միասին, ներառյալ՝ քաղաքականության մշակման ու իրականացման, իրազեկման ու կարողությունների զարգացման բաղադրիչները,
  - 2) ֆինանսավորման ավելի քան 25 տոկոսը<sup>1</sup> պետք է ուղղված լինի սույն կետի 1-ին ենթակետում նշված նպատակներից առնվազն մեկին,
  - 3) ակնկալվում է, որ ծրագրի արդյունքը կբարձրացնի դիմակայունությունը կլիմայի փոփոխության նկատմամբ, կնվազեցնի ջերմոցային գազերի արտանետումները կամ կավելացնի ջերմոցային գազերի կլանումները կամ կբարձրացնի իրազեկվածության մակարդակը կլիմայի փոփոխության վերաբերյալ:
5. Կլիմայական ֆինանսավորման դասակարգման համար առավել տարածված մեթոդաբանությունը «Ռիո նշիչների» մեթոդաբանություն է<sup>2</sup>: «Ռիո նշիչների» մեթոդաբանությունը տարբերակում է զարգացման գործողությունները, որոնք հետապնդում են կլիմայի փոփոխության հետևանքների մեղմումը և/կամ հարմարվողականությունը՝ որպես հիմնական (առաջնային) և կարևոր (երկրորդական) նպատակներ:
6. Ծրագրերը ենթակա են դասակարգման՝ ըստ ստորև նշված խմբերի՝ կախված դրանցում ամրագրված նպատակներից.
- 1) հիմնական, եթե նախագծի կամ հիմնավորման մեջ կլիմայի փոփոխության մեղմումը կամ հարմարվողականությունն ուղղակիորեն նշվում են որպես

<sup>1</sup> A Methodological Guidebook On Climate Public Expenditure And Institutional Review - [https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/migration/asia\\_pacific\\_rbap/RBAP-DG-2015-CPEIR-Methodological-Guidebook.pdf](https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/migration/asia_pacific_rbap/RBAP-DG-2015-CPEIR-Methodological-Guidebook.pdf)

<sup>2</sup> Handbook. OECD DAC Rio Markers for Climate - [https://www.oecd.org/dac/environment-development/Revised%20climate%20marker%20handbook\\_FINAL.pdf](https://www.oecd.org/dac/environment-development/Revised%20climate%20marker%20handbook_FINAL.pdf)

հիմնական գործունեության նպատակ: Նպատակը պետք է նշված լինի ծրագրի կամ միջոցառման փաստաթղթերում՝ որպես դրա իրականացման առանցքային հիմնավորումներից մեկը: Օր.՝ դիտարկվող ծրագիրը կամ միջոցառումը չի ֆինանսավորվի (կամ մշակվի այս եղանակով), եթե չպարունակի նշված նպատակը,

- 2) նշանակալի, եթե կլիմայի փոփոխության մեղմումը կամ հարմարվողականությունը հստակ ձևակերպված է որպես նպատակ, սակայն դա հիմնական շարժիչ ուժը կամ դրդապատճառը չէ: Փոխարենը, այս միջոցառումն ունի այլ առաջնահերթ նպատակներ, որոնք ձևակերպվել կամ ճշգրտվել են այնպիսի եղանակով, որն օգնում է լուծել համապատասխան կլիմայական խնդիրները:

#### 4. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

7. Կլիմայական ֆինանսավորումն ստացվում է տարաբնույթ աղբյուրներից, որոնք հնարավոր է դասակարգել որպես.

- 1) բազմակողմ.

ա. նպատակային ֆոնդեր՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (ԳԷՀ, GEF), Կլիմայի ներդրումային ֆոնդ (ԿՆՖ, CIF), Կանաչ կլիմայի հիմնադրամ (ԿԿՀ, GCF), Հարմարվողականության հիմնադրամ (ՀՀ, AF) և այլն,

բ. միջազգային ֆինանսական հաստատություններ, երբ ֆինանսավորումն իրականացվում է մեկից ավելի երկրների կողմից ստեղծված միջազգային բազմակողմ ֆինանսական կառույցների միջոցով՝ Համաշխարհային բանկ (ՀԲ, WB), Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ, ADB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎՋԵԲ, EBRD): Այդ կառույցների գործունեությունն ուղղված է կլիմայական ֆինանսավորման տրամադրմանը՝ ֆինանսական միջոցները

մասնակից երկրներից հավաքագրելու և ձևավորված ընդհանուր ֆոնդից միջոցները զարգացող երկրներին տրամադրելու միջոցով,

գ. այլ բազմակողմ ֆինանսավորման աղբյուրներ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր, Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ (ԳԶՄՀ, IFAD), ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (ՄԱՇՄԾ, UNEP), ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՄԱԱԶԿ, UNIDO), Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ, FAO),

- 2) երկկողմ ֆինանսավորումը տրամադրվում է անմիջապես զարգացման գործընկերների կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում, այդ թվում՝ Եվրոպական միության կողմից տրամադրվող կլիմայական ֆինանսավորումը,
- 3) տարածաշրջանային ֆինանսավորումն իրականացվում է տարածաշրջանային ֆինանսական հաստատությունների կողմից, օր.՝ Եվրասիական զարգացման բանկից,
- 4) այլ ֆինանսավորումը մասնավոր կազմակերպություններից և անհատների կողմից տրամադրված ֆինանսավորումն է:

#### 5. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

8. Ֆինանսական աջակցությունն իրականացվում է տարաբնույթ գործիքների միջոցով, ինչպիսիք են.

- 1) ռամաշնորհ՝ ֆինանսական հոսքեր, ապրանքներ կամ ծառայություններ, որոնց համար մարում կամ վերադարձ չի պահանջվում,
- 2) քաղաքականության վրա հիմնված ֆինանսավորում՝ աջակցում է քաղաքականության բարեփոխումների ազգային ծրագրերին և

ինստիտուցիոնալ գործողություններին, որոնք նպաստում են տնտեսական աճին, աղքատության նվազեցմանը և կայուն զարգացմանը: Ֆինանսավորումը տրամադրվում է որպես բյուջետային ոչ նպատակային ֆինանսավորում՝ ընդհանուր քաղաքականության և ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևորագույն գործողությունների շարք պարունակող ծրագրի բավարար իրականացման դեպքում,

- 3) արտոնյալ վարկ՝ գործարքներ, որտեղ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով և պարունակում է դրամաշնորհային բաղադրիչ: Դրամաշնորհային բաղադրիչն արտահայտվում է ծրագրի ֆինանսական պայմաններում՝ տոկոսադրույք, մարման ժամկետի արտոնյալ ժամանակահատված (մայր գումարի առաջին մարման հետաձգում),
- 4) ոչ արտոնյալ վարկ՝ առանց արտոնյալ պայմանների տրամադրված վարկ,
- 5) կապիտալում ներդրում՝ իրավաբանական անձանց, այդ թվում՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների ու ապահովագրական ընկերությունների կապիտալում կատարվող ներդրում,
- 6) երաշխիք՝ այլ անձի դրամային պարտավորության կատարման համար պատասխանատվության պարտավորություն՝ պարտապանի կողմից այն չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում: Միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունը համարվում է երաշխիք, եթե այն տվյալ կազմակերպության կողմից դասակարգվում է որպես այդպիսին,
- 7) տեխնիկական աջակցություն՝ կառավարությանը նպատակաուղղված աջակցության տրամադրման համար գիտելիքահեն գործընթաց՝ կարողություններ զարգացնելու կամ բացահայտված զարգացման կարիքների կամ խնդիրների դեպքում աջակցելու համար,

8) տեխնիկական զինում՝ տեխնիկական սարքավորումների տրամադրում:

#### 6. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

9. Ըստ կարգավիճակի՝ կլիմայական աջակցության ֆինանսավորումը դասակարգվում է.

- 1) պլանավորված՝ ֆինանսավորման այն տեսակն է, որի շուրջ պայմանավորվածությունը ձեռք է բերվել, սակայն չի տրամադրվել,
- 2) տրամադրված՝ ֆինանսավորման այն տեսակն է, որը փաստացի տրամադրվել է, և դրա հիմքում ընկած ակտիվները կամ դրամական միջոցները հասանելի են դարձել հաշվետու հաստատությանը:

10. Կլիմայական աջակցության ծրագիրն իր հերթին կարող է ունենալ հետևյալ կարգավիճակներից մեկը.

- 1) պլանավորվող՝ ծրագիրը գտնվում է պլանավորման փուլում, սակայն կանխատեսվում է, որ ֆինանսավորումը կտրամադրվի մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտը,
- 2) ընթացիկ՝ ֆինանսավորումը տրամադրվել է, և ծրագիրը գտնվում է իրականացման փուլում,
- 3) կատարված՝ ֆինանսավորումը տրամադրվել է, իսկ ծրագիրը՝ իրականացվել:

#### 7. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

11. Կլիմայական ֆինանսավորման աջակցությունը կարող է ունենալ հետևյալ նպատակային ուղղվածությունները.

- 1) կլիմայի փոփոխության մեղմում. սահմանափակելով կամ նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները կամ կլանելով ջերմոցային գազերը

(այսուհետ՝ ՋԳ)՝ մթնոլորտում ՋԳ խտությունը կայունացվում է այնպիսի մակարդակի վրա, որը կանխում է վտանգավոր մարդածին միջամտությունը կլիմայական համակարգին,

2) կլիմայի փոփոխության հարմարվողականություն. անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ակնկալվող ռիսկերը կամ ազդեցությունները պահանջում են հակազդող գործողություններ՝ բնակչության անվտանգությունը և ակտիվների պահպանությունն ապահովելու համար,

3) խաչվող (cross-cutting) գործողությունները վերաբերում են ինչպես կլիմայի փոփոխությունների հետևանքների մեղմմանը, այնպես էլ հարմարվողականության բաղադրիչներ ներառող միջոցառումների ֆինանսավորմանը:

12. Հարմարվողականությանը միտված ծրագրի անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ակնկալվող ռիսկերը կամ ազդեցությունները պահանջում են հակազդող գործողություններ՝ բնակչության անվտանգությունը և ակտիվների պահպանությունն ապահովելու համար:

Հավելված N 3

շրջակա միջավայրի նախարարի  
2024 թվականի հունիսի «07»-ի N 202 - Լ հրամանի

### ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

1. Սույն ուղեցույցում բերված ոլորտներն ու ենթաոլորտներն ունեն ուղղորդող նպատակ և չեն ներկայացնում ոլորտների ու ենթաոլորտների բացառիկ կամ սպառիչ ցանկ:
2. Կլիմայական ֆինանսավորման աջակցությունը կարող է ունենալ հետևյալ նպատակային ուղղվածությունները՝ կլիմայի փոփոխության մեղմում, կլիմայի փոփոխության հարմարվողականություն և խաչվող գործողություններ:
3. Կլիմայական ֆինանսավորման աջակցությունը/ծրագիրը կարող է դասակարգվել՝ որպես կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված, եթե կանխելով կամ նվազեցնելով ՋԳ արտանետումները՝ այն զգալիորեն նպաստում է մթնոլորտում ՋԳ կոնցենտրացիայի կայունացմանն այնպիսի մակարդակի վրա, որը կանխում է վտանգավոր մարդածին միջամտությունը կլիմայական համակարգին:
4. Համընդհանուր սկզբունքների համաձայն՝ առանձնացվում են կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումների հետևյալ երեք դասերը.
  - 1) բացասական կամ շատ ցածր արտանետումներով գործունեություններ, որոնք հանգեցնում են բացասական, զրոյական կամ շատ ցածր մակարդակի ՋԳ արտանետումների և լիովին համահունչ են Փարիզյան համաձայնագրի երկարաժամկետ ջերմաստիճանի նպատակին, օրինակ՝ անտառների և հողերի

կայուն օգտագործման արդյունքում ածխածնի կլանում (sequestration) կամ վերականգնվող էներգիայի որոշ ձևեր,

- 2) անցումային գործողություններ, որոնք դեռևս հանդիսանում են ՋԳ արտանետման համակարգերի մաս, սակայն կարևոր են և նպաստում են կլիմայական չեզոք տնտեսության անցմանը (օր.՝ էներգաարդյունավետության բարելավումն արտադրության մեջ) և միաժամանակ համապատասխանում են ստորև ներկայացված պայմաններին.

ա. բացակայում են տեխնոլոգիապես և տնտեսապես իրագործելի ցածր արտանետումներով այլընտրանքները,

բ. զգալիորեն գերազանցում են երկրի կամ ոլորտի այն ստանդարտները, հենանիշները կամ շեմերը, որոնք նախատեսված են ՋԳ արտանետումները կամ արտանետումների ինտենսիվությունը չափելու համար,

գ. չեն խոչընդոտում շատ ցածր արտանետումներով գործունեության զարգացմանը կամ ներդրմանը,

դ. չեն հանգեցնում այնպիսի ինտենսիվ ՋԳ արտանետումներով ակտիվներից կախվածությանը, որոնք անհամատեղելի են ՋԳ արտանետումների զուտ զրոյի հասնելու երկարաժամկետ նպատակի հետ,

- 3) հնարավորություն ստեղծող գործողություններ, որոնք կարևոր են այլ գործունեություններին կլիմայի փոփոխության մեղմման գործում էական ներդրում ունենալու հնարավորություն տալու տեսանկյունից, օրինակ՝ շատ ցածր արտանետումների տեխնոլոգիաների արտադրություն և միաժամանակ համապատասխանում են հետևյալ պայմաններին.

ա. անհրաժեշտ են կլիմայի փոփոխության մեղմման այլ ընդունելի միջոցառումների մշակման կամ իրականացման համար,



բ. չեն խոչընդոտում բացասական կամ շատ ցածր արտանետումներով միջոցառումների մշակմանը կամ տեղակայմանը,

գ. չեն հանգեցնում այնպիսի ինտենսիվ ՋԳ արտանետումներով ակտիվներից կախվածությանը, որոնք անհամատեղելի են ՋԳ արտանետումների զուտ զրոյի հասնելու երկարաժամկետ նպատակի հետ:

5. Այն ծրագրերը, որոնք ուղղակիորեն (որտեղ հնարավոր է գնահատել) կամ անուղղակիորեն հանգեցնում են անտառահատումների, պետք է բացառվեն մեղմման միջոցառումներից:

6. Հարմարվողականությանը միտված ծրագրերի անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ակնկալվող ռիսկերը կամ ազդեցությունները պահանջում են հակազդող գործողություններ՝ ուղղված բնակչության անվտանգությանը և ակտիվների պահպանությանը:

7. Խաչվող գործողությունների համար նախատեսվող ֆինանսավորումն այն միջոցառումների ֆինանսավորումն է, որոնցում առկա են ինչպես կլիմայի փոփոխությունների մեղմման, այնպես էլ հարմարվողականության բաղադրիչներ: Որպես օրինակ կարող են դիտարկվել հետևյալ գործողությունները.

1) եղանակի մոնիթորինգի, կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգի կատարելագործում (ներառյալ՝ հարակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների համակարգը), արտակարգ իրավիճակների պլանների մշակում, աղետների ռիսկի կառավարման մարմինների այլ գործողություններ,

2) կլիմայի հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկության բարձրացում,

3) կլիմայի հարմարվողականությանը և կլիմայի փոփոխությունների դիմակայունությանն առնչվող ազգային կամ ոլորտային հատուկ

քաղաքականություններ, ծրագրեր, կանոնակարգեր (դրանց հետ կապված ֆինանսական գործիքներ),

4) կլիմայական մոդելների մշակում, կլիմայի փոփոխության ազդեցության վերլուծություններ, հարմարվողականության լուծումների վերաբերյալ հետազոտություններ:

8. Առանձնացվում են կլիմայական աջակցության ծրագրերի իրականացման հետևյալ ոլորտները.

1) անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում,

2) առողջապահություն,

3) արդյունաբերություն,

4) գյուղատնտեսություն,

5) էներգետիկա,

6) թափոնների կառավարում,

7) կլիմայի փոփոխության կանխատեսումներ և մոնիթորինգ,

8) կրթություն և կարողությունների զարգացում,

9) հանրային կառավարում,

10) հետազոտություն, տեխնոլոգիաների մշակում և նորարարություն,

11) շինարարություն,

12) ջրային ռեսուրսներ,

13) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ և թվային տեխնոլոգիաներ,

14) տրանսպորտ:

9. Կլիմայական ազդեցություն ունեցող գործողությունների դասակարգիչը ոլորտներով և օրինակներով ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Կլիմայական ազդեցություն ունեցող գործողությունների դասակարգիչ և օրինակներ

Հ/Հ	Ոլորտ	Ենթաօլորտ	Նկարագիր և օրինակներ	Կլիմայական գործողություն <sup>3</sup>
1	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Անտառային տնտեսություն	Անտառային հողերի կայուն կառավարում, անտառավերականգնում, անտառապատում, պաշտպանական անտառաշերտերի ստեղծում, անտառազրկման և անտառների դեգրադացիայի կանխարգելում կամ հնարավոր բացասական հետևանքների չեզոքացում	Մ
2	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Ցամաքային էկոհամակարգերի հարմարվողականություն	Կլիմայի փոփոխության բացասական ազդեցության նվազեցման (այդ թվում՝ կլիմայական փոփոխականության և էքստրիմումների՝ առավելագույն բարձր և ցածր ջերմաստիճաններ, մթնոլորտային տեղումներ և այլն), էկոհամակարգերի հարմարվողականության կարողությունների բարձրացմանը միտված ծրագրերի, գործողությունների կամ մոտեցումների մշակում և իրականացում	Հ
3	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Անտառային տնտեսություն	Անտառների կայուն կառավարմանը և կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանը, հարմարվողականության և դիմակայունության բարձրացմանը, անտառային կենսաբազմազանության պահպանության, անտառային հրդեհների, վնասատուների բռնկումների կանխարգելմանը միտված անտառային ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում	Հ
4	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Խոնավ տարածքներ	Կլիմայի փոփոխության բացասական ազդեցության նվազեցման (այդ թվում՝ կլիմայական փոփոխականության և էքստրիմումների՝ առավելագույն բարձր և ցածր ջերմաստիճաններ, մթնոլորտային տեղումներ և այլն), ջրի ավաք ավազանների կառավարման բարելավման, հեղեղումների կանխարգելման կամ դրանց ազդեցության նվազեցման, խոնավ տարածքների և ջրային էկոհամակարգերի հարմարվողականության կարողությունների բարձրացմանը միտված նախագծերի, գործողությունների կամ մոտեցումների մշակում և իրականացում	Հ
5	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Բնակավայրեր	Բնակավայրերի կանաչապատ (ծառապատ) տարածքների, քաղաքային անտառպուրակների, փողոցային տնկարկների և սանիտարական կանաչ գոտիների բարեկարգում և զարգացում	Հ

<sup>3</sup> Մ՝ մեղմում, Հ՝ հարմարվողականություն, Մ/Հ՝ խաչվող

6	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Անտառային տնտեսություն	Անտառների կայունության և հարմարվողականության ուժեղացում և կանաչ գյուղատնտեսության աճ՝ մեղմման գործիքների կիրառմամբ	Մ/Հ
7	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Անտառային տնտեսություն	Ծրագրեր, որոնց միջոցով անտառների ոչ կայուն օգտագործումից անցում կկատարվի կայուն օգտագործման	Հ
8	Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	Հողերի կառավարում	Համայնքներում արտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության և կայունության բարձրացման ծրագրեր	Հ
9	Առողջապահություն	Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում	Իմունականիսարգելման ծրագրերի իրականացում, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական դիտարկում, հիվանդությունների կանխարգելիչ և հակահամաճարակաբանական միջոցառումների իրականացում, կլինայի փոփոխության նկատմամբ զգայուն հիվանդությունների կանխարգելման և արձագանքման համակարգերի հզորացում, Բուժաշխատողների համար կլինայի փոփոխության ազդեցությունների և ռիսկերի վերաբերյալ դասընթացների անցկացում և ուսումնական ձեռնարկների մշակում, Կլինայի փոփոխության նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների համար ջերմային ալիքների վաղ նախազգուշացման համակարգերի մշակում	Հ
10	Առողջապահություն	Մայրական և վերարտադրողական առողջության պահպանում	Վերարտադրողական առողջության ծրագրերի իրականացում	Հ
11	Արդյունաբերություն	Էներգաարդյունավետություն	Գործող արդյունաբերական ձեռնարկություններում (brownfield) էներգաարդյունավետության բարձրացում	Մ
12	Արդյունաբերություն	Էներգաարդյունավետություն	Ցածր ածխածնային նոր արտադրությունների հիմնում (greenfield) կամ գոյություն ունեցող արտադրական ձեռնարկությունում լրացուցիչ սարքավորումների տեղադրում, որոնց միջոցով էականորեն նվազեցվելու է ածխածնային ինտենսիվությունը	Մ

13	Արդյունաբերություն	ԶԳ արտանետումների կրճատում	Գոյություն ունեցող արդյունաբերական ենթակառուցվածքի արդիականացում, որը հանգեցնում է արդյունաբերական ջերմոցային գազերի և դրանց պրեկուրսորների արտանետումների կրճատմանը, գլոբալ տաքացման ավելի ցածր ներուժ ունեցող արդյունաբերական ջերմոցային գազերի արտանետումների անցմանը կամ տեխնոլոգիաների կամ պրակտիկայի ներդրմանը, որոնք նվազագույնի են հասցնում գազերի արտահոսքերը	Մ
